

Ժամանակակից Թերեմանը Էփֆիար 1881 Սեպտեմբեր 24 թուականով կը գրէ. «Անտոն Պէյ Մըսըրլեան Երուսաղէմի մէջ հող մը գնած եւ Պոլսոյ Հայ Կաթ. Պատրիարքարանի նուիրած է: Այս հողին վրայ կը գտնուի Կոստանդիանոսի մօրը՝ Սըրբուհի Հեղինէի Դ. գարուն սկիզբը շինած մեծ եկեղեցւոյ մը աւերակը: Հրաման ըրած են որ այս աւերակը պեղուի եւ ինչ հնութիւն որ գտնուի՝ պահպանուի: Մկրտիչ Վ. Աշնեան պաշտօն կ'ընդունի այսօր մեկնել նաւով Երուսաղէմ⁷⁸»:

Անտոն Պէյ Երուսաղէմի մէջ գնած այդ հողին վրայ յետոյ եկեղեցի մը եւ հաւանօրէն նաեւ անհրաժեշտ բնակարան ժողովրդապետական կառուցած է: Հակառակ մեր պրպոտեմներուն ու հարկ եղած տեղերը ըրած դիմումներուն՝ չկրցանք ստուգել եկեղեցւոյ շինութեան թուականը եւ յարակից պարագաները:

Ներկայիս Երուսաղէմի Հայ Կաթողիկէ պատրիարքական փոխանորդութեան տեղապահ Գեորգ. Յովնանէս Վրդ. Գույումեան Մասիսի մէջ հետեւեալ լուսարանութիւնը տուած է Մըսըրլեան Անտոն Պէյի բարերարական գործի մասին. «Անցեալ դարու կէսին՝ Երուսաղէմի Կաթողիկէ Պատրիարքական փոխանորդութեան տեղապահ եղաւ Սերոբէ Ծ. Վրդ. Դաւիթեան, որ առաջած էր Գրիգոր-Պետրոս Ը. փոխան՝ Միքայէլ Արքեպ. Աղեքսանդրեանի, որ տիրոջատունն է Երուսաղէմի: Հողն ու առաջին եկեղեցին կը պարտինք Անտոն Պէյ Մըսըրլի բարերարութեան... ամենէն արդիւնաւոր ժողովրդապետն եղաւ Տ. Յովակիմ Ծ. Վրդ. Թումայեան, որ շինել տուաւ նոր եկեղեցին⁷⁹»:

Անտոն Պէյ Մըսըրլեան 1888 Փետր. 14ին կնքած է իր արդիւնաշատ կեանքը: Մարմինը կը հանդէի Շիշլիի գերեզմանատունը, ուր «հանգստեան մատուռ»ի մը ճակատը գրուած է. Գեորգաստան Մըսըրլեան, իսկ ներսը քարի վրայ.

Անտոն Մըսըրլեան
ծնեալ յամին 1814
վախճանեալ 14 Փետրուար 1888⁸⁰:

⁷⁸ Թերեմանը Էփֆիար, Կ. Պ. 1881, թ. 1232:
⁷⁹ Մասիս, Պէյրութ 1952, թ. 45:
⁸⁰ Հ. Յ. Ծ. Վ. Բօսեան, Գերեզմանատուն, անդ՝ էջ 77:

Մահէն երեք տարի առաջ, 1885 Յունիս 11ին, Անտոն Պէյ կտակ մ'ըրած է, որով 3000 օսմ. ոսկի կը յատկացնէ Ս. Յակոբի վարժարանին եւ Անարատ Յղութեան աղքատ սանուհիներուն: Կտակահատար նշանակած է Գրիգոր Չըրաքը, պայմանաւ որ կտակի գործադրութիւնը ըլլայ իր մահէն 2 տարի վերջ⁸¹:

Բացի վերոյիշեալներէն՝ Մըսըրլեան Գերգաստանի կը վերաբերին հետեւեալ անձերն ալ, որոնց մասին ոչ մէկ լուսարանութիւն կրցանք գտնել.

- Մարի Կիւզէլեան
ծն. Մըսըրլեան
1856 † 1923.
- Եղբայրդ Գրիգոր
Ջերմ արցունքով լի
Դընէ գայս տապան
Հոգւոյդ անմահի⁸².
- Ընտանիք Ժ. Մըսըրլեան
Էփրիկ Մըսըրլեան
1858 † 1923⁸³

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՍԵԱՆ

⁸¹ Տես այս մասին Հ. Մ. Վ. Սրապեան, Ս. Յար, Հիւ. անդ՝ էջ 210—213:
⁸² Հ. Յ. Ծ. Վ. Բօսեան, անդ՝ էջ 77:
⁸³ Անդ՝ էջ 100:

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ԼՁՋԱՐԵԱՆ ՏՈՂՄԻ

ԵՒ ԼՁՋԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Աշխատասիրեց՝ ՅՈՎՍԷՓ ԹԱԴԵՈՍԵԱՆ
(Շարունակութիւն):

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ԳՒՈՒՆ Ը.

ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԽԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԱՐՁԱԿԱՆ ԿԱԶՄԸ
(1815—1890)

Ճեմարանը սկզբից ունեցել է միայն զիւրօթիկ աշակերտներ՝ Լազարեանները որ զեղիւնները. այնուհետեւ ժամանակի ընթացքում ընդունուել են նաեւ երթեւեկներ ու նոր զիւրօթիկներ՝ մասնաւոր նուիրատուների որդեգիրներ եւ կամ սեփական հաշուով սովորողներ:

Գիւրթիկ աշակերտների 9/10րդը եղել են հայ երեխաներ եւ շատ փոքրաթիւ ուսուերեխաներ. այսպէս, օրինակ, 80ական թուականներին, զիւրթիկ աշակերտների թիւը հասել էր շուրջ 160 հոգու, որոնցից միայն 15 հոգի ուսու երեխաներ էին: Մեծ մասը եկած էին Արարատեան աշխարհից, իսկ մի փոքր մասը՝ Հիւսիս. Կովկասից: Իմ աշակերտութեան ժամանակ կային նաեւ 3 հոգի Պոլսեցի հայ երեխաներ, որոնցից միայն մէկը աւարտեց ճեմարանն ու համալսարանը, եղաւ բժիշկ եւ մնաց Թուսաստանում, միւսը՝ Կրդից դուրս եկաւ, իսկ երրորդը՝ ստորին դասարաններից հեռացաւ:

Աշակերտների թուի մասին 1815 թ. մինչեւ 1865 թ. չկան սխտեմատիկ տեղեկութիւններ. մի քանի տուեալներ զանազան ժամանակների համար արդէն յիշատակուած են մեր պատմութեան ընթացքին:

Հետեւեալ տախտակի վրայ մատնանշուած են աշակերտների թուի մասին տեղեկութիւններ սկսած 1865 թ. մինչեւ 1890 թ. այդ տուեալները մենք քաղել ենք «Լազ. Ճեմ. 75ամեակը» հրատարակութիւնից:

Այս տախտակից երեւում է՝

ա. Որ աշակերտների թիւը աստիճանաբար աճել է եւ այդ աճումը աւելի ուժեղ է եղել 1872 թ. յետոյ, երբ ճեմարանը նոր կանոնադրով անցել է ժողովրդ. լուսաւորու-

Ընդհանուր տախտակ
Լ. Ճեմարանի աշակերտների թուի 1865—1890 թթ.

Պատ. թ.	Աշակերտների ընդհանուր թիւը առ մեր ճեմարանը	Երթեւեկներ	Գիւրթիկներ	Հայ տուսուերեխաներ	Որդեգիրներ	Շրջանաւարտներ
1865/66	159	13	146	—	95	3
1866/67	153	9	144	—	98	11
1867/68	161	23	138	—	94	17
1868/69	157	25	132	96	97	16
1869/70	162	22	140	96	94	—
1870/71	156	20	136	97	89	11
1871/72	177	23	154	104	92	8
1872/73	183	29	154	101	95	4
1873/74	223	43	180	114	95	3
1874/75	234	49	185	132	94	3
1875/76	241	66	175	—	94	—
1876/77	241	63	178	149	94	10
1877/78	248	67	181	154	93	7
1878/79	242	65	177	157	92	9
1879/80	256	69	187	—	88	9
1880/81	246	64	182	171	91	8
1881/82	240	63	177	168	90	11
1882/83	216	47	169	149	94	21
1883/84	228	72	156	149	96	12
1884/85	246	74	172	156	98	12
1885/86	242	71	171	156	96	11
1886/87	246	84	162	152	100	10
1887/88	259	95	164	160	98	9
1888/89	275	109	166	159	96	6
1889/90	273	117	156	158	101	7
Ընդամենը	5464	1382	4 82	2778	2364	218*

թեան միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների շարքը:

բ. Որ զիւրթիկ աշակերտները միշտ կազմել են մեծամասնութիւն երթեւեկների համեմատութեամբ:

գ. Որ հայ երեխաները կազմել են ճեմարանի ամբողջ աշակերտութեան 60—75%ը այդ է պատճառը, որ Լազարեանները միշտ համարել են, որ ճեմարանը հայկական դպրոց է, թէեւ դպրոցական բոլոր առարկաները աւանդուել են ուսուերէն լեզուով, բացի Հայոց լեզուից, Հայոց պատմութիւնից ու կրօնից:

* Մի այլ տեղում մատնանշուած է՝ 224:

դ. Որ վերջին 25ամեակում ձեռարանը տուել է տարեկան շուրջ 9 շրջանաւարտներ, մինչդեռ նախկին 50ամեակում նրանց թիւը եղել է շատ անելի բարձր¹: Այս երեւոյթը բացատրուում է նրանով, որ 1872 թ. նոր Կանոնագրով կրթական ծրագրի մէջ մտցրուած էր երկու հին լեզուների՝ լատիներէնի եւ յունարէնի դասաւանդութիւնը, որոնք չափազանց դժուարացրել էին աշակերտների ուսման գործը եւ նուազացրել ընդհանուր յառաջադիմութեան տոկոսը. շատերը ստիպուած էին լինում կէս ճամբին մնալ եւ հետանալ դպրոցից. քչերն էին հասնում մինչեւ Տրդ դասարանն եւ աւարտում . . . :

Մենք շատ լաւ յիշում ենք, որ երբ 1887 թ. մասնք ձեռարանի առաջին դասարանը, այդ դասարանում կայինք 57 հոգի, բայց երբ 1895 թ. մենք աւարտեցինք, Տրդ աւարտական դասարանը, հասել էին միայն 17 հոգի, եւ դա համարում էր շրջանաւարտների մեծ թիւ:

*

Ձեռարանի ուսուցչական եւ վարչական կազմերի մասին չկան տեղեկութիւններ մեր ձեռքի տակ եղած աղբիւրներում, բացի այն մի քանի հակիրճ վկայութիւններից, որոնք վերաբերում են՝ Մկրտիչ Էմինին, Սմբատ Շահազիզին, Միքայէլ Նալբանդեանցին Գանակեանին, Միլլէրին, Կոստանեանին եւ որոնք արդէն վերջ յիշատակուած են:

Սկզբնական շրջանում ձեռարանի ընդհանուր վերահսկողութիւնը ստանձնել էին՝ Հոգաբարձուն եւ նրա օգնականները, որոնք կրում էին զանազան անուններ զանազան ժամանակներում՝ րեկտոր, կոմսանդիր, վերատեսուչ եւ այն: Հետագայում միայն վերջնականապէս հաստատուում են՝ վերատեսուչ (գիրեկտոր) կոչումները:

Մ. Էմինը եղել է առաջին տեսուչը՝ 1850 թուից սկսած:

Առաջին վերատեսուչը եղել է գնդապետ Չեղեանին, եթէ չհաշուինք Սաչատուր Լա-

¹ Թէեւ առաջին 50ամեակում ձեռարանաւարտների թիւը յոյսանի չէ իւրաքանչիւր ուսումն. տարու համար, բայց գիտենք, որ 1848/49ից մինչեւ 1864/65 ուս. տարիների ընթացքում՝ այսինքն 17 տարուց մէջ ձեռարանը տուել է 399 ուսումնաւարտներ, այսինքն՝ միջին հաշուով տարեկան 24 հոգի եւ այդ այն ժամանակներում, երբ աշակերտութեան թիւը շատ անելի պակաս է եղել, քան հետագայում: Այսպէս, օրինակ, 1825 թ. ձեռարանը ունեցել է միայն 75 աշակերտ, 1863 թ. — 136, իսկ 1865 թ. — 159:

զարեանին, որ միաժամանակ եղել է Հոգաբարձու եւ վերատեսուչ:

Արդ, յիշատակենք միայն վարչական մարմինների կազմերը ժամանակաշրջանի կարգով:

Գլխաւոր կառավարչապետներ

1. Կոմս Ալեքսէյ Անդրէեւիչ Արակչեւե՝ 1824—1827 թթ.:
2. Կոմս Ալեքսանդր Խրիստոֆորովիչ Բենկենգորֆ՝ 1828—1844 թթ.:
3. Կոմս Ալեքսէյ Ֆեոդորովիչ Օրլով՝ 1844 հոկտ. 12ից—1860 թ.:
4. Գաղտնի խորհրդական Վլադիմիր Պետրովիչ Բուսկով՝ 1860—1869:
5. Կոմս Դիմիտրի Անդրէեւիչ Տոլստոյ՝ 1870—1872 (միաժամանակ Ժողովրդ. լուսաւ. նախարար):

Վերատեսուչներ:

1. Սաչատուր Յովակիմեան Լազարեան՝ 1826—1849 թթ.:
2. Գնդապետ Չեղեանի՝ 1850—1856:
3. Նիկոլայ Դաւիդովիչ Դեյլանով՝ 1856—1861:
4. Ներդրածական Խորհրդական Եանուար Միխայլովիչ Նէվէրով՝ 1861—1864:
5. Պրոֆ. Բարսա, Իվան Կոնդրատեւիչ՝ 1864—1868:
6. Գ. Քանանեան՝ վերատեսուչի պաշտօնակատար եւ միաժամանակ տեսուչ՝ 1868—1869:
7. Նիկոլայ Դաւիդովիչ Դեյլանով՝ 1869—1881:
8. Գէորգ Քանանեան՝ 1881—1897:
9. Պրոֆ. Վսէվոլոդ Ֆեոդորովիչ Միլլեր՝ 1897—1911:
10. Պրոֆ. Պաւել Վասիլեւիչ Գիդուլեանով՝ 1911—1917:

Տեսուչներ:

1. Մկրտիչ Էմին՝ 1850—1861:
2. Գէորգ Քանանեան՝ 1861—1881:
3. Լէվէնշտէյն՝ մինչեւ 1897 թ.:
4. Պրոֆ. Գրիգոր Սալաթեան՝
5. Գառապարեան՝
6. Իսահակ Թանգեան (Թանդով)՝
7. Կարապետ Կոստանեան՝ 1911—1917 թթ.:

Պատուակալ հոգաբարձուներ:

1. Իշխան Սիմէոն Դաւիդովիչ Արամէլիք-Լազարեան:
2. Իշխան Սիմէոն Սիմէոնովիչ Արամէլիք-Լազարեան:

*

Աշակերտութիւնը օժտուած է եղել դպրոցական անհրաժեշտ պիտոյքներով ու կրթական միջոցներով:

Մասնագաւարանում եղել են՝ առ 1863 թ.՝ ա. Գրքեր հայերէն, ռուսերէն, դերմաներէն, ֆրանսերէն եւ միւս եւրոպական լեզուներով, ինչպէս եւ արեւելեան լեզուներով . . . 5.256

Հատոր

բ. Ձեռագիրներ ռուսերէն, հայերէն եւ արեւելեան լեզուներով . . . 227 Այդ 227 ձեռագիրներից ռուսերէն եւ արեւելեան լեզուներով՝ 85, մնացեալը՝ հայերէն:

գ. Ձեռագրային կարիքները զանազան գործիքներ 164

դ. Հանքարանական կարիքներում . . . 4.772

ե. Հին դրամներ հաւաքածոյ (բաղկացած ոսկի, արծաթէ զանազան հին եւ նոր դրամներ մեղալներով) . . . 2.421

զ. Աշխարհագրական քարտէշներ, ատլասներ, դիմանկարներ, նկարներ եւ այլն 1.186

է. Երկրագունդեր, մեծ ու փոքր . . . 6.000

Մասնագաւարանի դրացուցակը 1861 թ. կազմել է յստուկ յանձնախումբ, բաղկացած 3 հոգուց, որոնցից մէկը եղել է՝ վերակացու, Մանուկ Սաղաթեանը, Լեւոնտովի «դեւ» պօզմայի անուղղական թարգմանիչը:

*

Ձեռարանի գլխաւոր գեղեցիկ ու ճաշակաւոր մուտքի դիմացի պատից կախուած էին ոսկեզոյն շրջանակների մէջ, կապոյտ գոյնով ներկուած մեծ տախտակներ, որոնց վրայ ոսկեզօծ տառերով գրուած էին ձեռարանի այն շրջանաւարտների անուն-ազգանունները, որոնք արժանացել էին ոսկէ եւ արծաթէ մեդալների:

Այդ տախտակների վրայ առ 1862 թուականը արձանագրուած են՝ 125 անուններ:

Այդ անունների մէջ կան հանրաձանօթ անձանց անուններ, ինչպիսիք են՝ Յակոբ եւ Դաւիթ Արզանեանները, Սիմէոն Սուլթան-

չան, Յովսէփ Չէրքէզեան, Պետրոս Շանչեան, Գարբէլ Սատիսեան, Սերովբէ Պատկանեան, Կարապետ Եզով, Չարմայր Մտրեանց, Սմբատ Շահազիզ եւ այլն:

*

Մի քանի խօսք եւս գիշերօթիկ աշակերտների ներքին կեանքի մասին, հիմնուելով մեր յուշերի վրայ, երբ եղել ենք ութը (8) տարի գիշերօթիկ աշակերտ ձեռարանի գիմնադրոնական բաժնում (1887—1895 թթ.), իսկ հետագայում՝ վերակացու, դաստիարակ եւ ուսուցիչ՝ 1909—1918 թթ.:

Գիշերօթիկ աշակերտները սպրել են փակ կեանքով ձեռարանի շորս պատերի մէջ, գրեթէ առանց լոյս աշխարհ տեսնելու. . . :

Ստանալով սնունդ բաւարար չափով, հագուստ, ուսում, աշակերտութիւնը կըտրուած է եղել մարդկային հասարակութիւնից. . . : Նրա միակ մխիթարանքը եղել է ամենօրեայ դրօսանքը դասերից յետոյ, վերակացուների հսկողութեան ներքոյ. զոյգ-զոյգ դնում էինք դրօսանքի գրեթէ միշտ միեւնոյն փողոցներով. հագուստը գէպըրում էր փոխուած այդ մարշրուտը. դրօսանքը տեսում էր մի ժամ:

Մեծ մխիթարանք էր աշակերտութեան համար, երբ տօն կամ կիրակի օրերին դնում էինք թատրոն. . . : Մեր միապաղաղ առօրեայ կեանքի մէջ այդ այցելութիւններն էին, որ մտցնում էին լուսոյ ճառագայթ. . . :

Մոսկուայի Կօրչի թատրոնը, որ եղել էր ձեռարանի նախկին աշակերտ, ամէն կիրակի օր առաւօտեան, երբ ներկայացուում էին պիեսներ աշակերտութեան համար, ուղարկում էր 30—40 հատ ձրի տոմսեր. նոյնը առնում էին Մոսկուայի երկու կայսերական թատրոնները արքայական տոների ժամանակ:

Աշակերտութեան օրուայ կեանքի ժամերը դասաւորուած ու սահմանուած էին՝ թէյի նախաճաշի, ճաշի, դասերի, դասերի պատրաստութեան, քնելու ու խաղալու համար:

Ամառուայ արձակուրդներին աշակերտներին տանում էին ամարանոց՝ ամէն տարի միեւնոյն գուղը՝ Ֆիլի, եւ միեւնոյն ամարանոց. . . բարեբախտաբար, ամարանոցը գտնուում էր մեծահարուստ Շելապուտինի հակայ անտառի կողքին. յաճախ էինք դնում այդ անտառը սուսկ կամ ելակ հաւաքելու:

Հեռու չէր եւ Մասկուս-գետակը, ուր ձե- մարանը ունէր սեփական փայտէ լողարանը. լաւ եղանակներին, ճաշից առաջ, գնում էինք լողանալու, որ մեզ մեծ հաճոյք էր պատճառում:

Բախտաւոր էին այն գիշերօթիկ աշա- կերտները, որոնք ամառուայ արձակուրդնե- րին մեկնում էին իրենց ծննդավայրերը, իրենց ծնողներին մօտ, իսկ ուսումն. տարուայ ընթացքում Մոսկուսում ունէին ազգական- ներ կամ մօտիկ ծանօթներ: Ամէն շարաթ երեկոյ կամ կիրակի ու տօն օրերին այդ- պիսիները արձակուրդ էին ստանում եւ այդ- պիսով հնարաւորութիւն էին ստանում, այս- պէս ասած աշխարհ գուրս գալու, մարդ տեսնելու, նոր տպաւորութիւններ ստանա- լու:

Գիշերօթիկ երեխաների մասնաւոր նա- մակազրութիւնը ազատ էր ամէն հսկողու- թիւնից ու քննութիւնից:

Միայն երբ գրամ էին ստանում, տե- սուշը այդ գրամական նամակները աշա- կերտի ներկայութեամբ բաց էր անում, նա- մակը տալիս իրեն, իսկ գրամը պահում եւ ապա ամէն շարաթ օր. փոքրիկ գումարնե- րով տալիս՝ սկսած 20կոպէկից...:

Բացի դիւտաւոր, հիմնական մատենագա- րանից, ձեմարանը ունէր նաեւ գրադարան աշակերտութեան համար՝ հայերէն եւ ուս- սերէն ընթերցանութեան գրքերով:

Աշակերտներից մէկն էր վարում այդ գրադարանը: Ամէն օր դասերից յետոյ գրա- գարանից տրուած էին գրքեր:

Պիտի ասել, որ հայ երեխաների մէջ ըն- թերցասիրութիւնը շատ թոյլ էր, մինչդեռ այն մի քանի ուսու գիշերօթիկ երեխաների ձեռքից գիրքը վար չէր գրւում...:

Կիրակի եւ տօն օրերին աշակերտները վերակացուների առաջնորդութեամբ գոյդ- գոյզ գնում էին Ս. Սաչ եկեղեցին, որ գրա- նում էր ձեմարանի զիմաց նոյն Հայոց փո- ղոցի վրայ:

Կարգապահական խիստ պատիժներ չկային՝ անկիւն կանգնեցնել, արձակուրդից զրկել, իսկ ծայրայեղ դէպքերում առանձ- նացնել 1—2 ժամով մի լուսաւոր սենեա- կում (Կարցեր):

ձեմարանը ունէր փոքրիկ հիւանդանոց, իր Ֆելդշերով ու բժշկութեան քոյրով: Ամէն օր երեկոյեան, առաջին սերտողութիւնից յե- սոյց, Ֆելդշերը անհրաժեշտ դեղորայքով,

զալիս էր եւ ընդունում երեխաներին, որոնք որեւէ կարիք էին ունենում: Ծանր հիւանդ- ներին տեղաւորում էին հիւանդանոցում, բժշկի հսկողութեան ու խնամքին ենթակայ:

Ազատ ժամերին աշակերտները խաղում էին ձեմարանի ընդարձակ պարտէզում, ա- մառը, իսկ ձմեռը՝ մարզանքի համար կա- ուուցուած մեծ սրահում՝ Մանուկ Իէյի սրա- հում:

Աշակերտութեան մէջ սովորութիւն կար, որ յառաջագէմ աշակերտները կամ բարձր դասարանների աշակերտները օգնում էին ստորին դասարանների թոյլ աշակերտներին դասեր պատրաստելու մէջ: Ունեւոր աշա- կերտների ծնողները երբեմն վարձատրում էին իրենց թոյլ երեխայի հետ պարապող ա- շակերտին:

Գ.ՂՈՒԽ Թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ի՞նչ վիճակում է եղել մանկավարժական գործը ձեմարանում, — այս հարցումին դժուար է փոքր է շատէ լրիւ պատասխան տալ, քանի որ գրեթէ տեղեկութիւններ չկան մեր ձեռքի տակ եղած աղբիւրներում:

Անշուշտ, գոյութիւն չի ունեցել որեւէ մանկավարժական սխառում, մանաւանդ սկզբ- բնական շրջաններում, որ կիրառուած լինէր ամբողջ ձեմարանում, լինէր ընդհանուր ու պարտադիր բոլոր ուսուցիչներին համար: Նոյն իսկ մեր աշակերտութեան օրերին 80ական թուականների վերջերքին եւ 90ական թուականների սկզբում, երբ վաղուց ար- դէն ձեմարանը մասն էր ժողովրդական լու- սաւորութեան նախարարութեան դպրոցա- կան ցանցի մէջ, մի ընդհանուր մանկավար- ժական սխառում գոյութիւն չունէր. իւրա- քանչիւր ուսուցիչ վարում էր իր դասաւան- դութիւնը իր ըմբռնած ձեւով, իր փորձա- ութիւնից գուրս բերած հասկացողութեան համաձայն...:

Կան կցկտուր տեղեկութիւններ միայն կարգապահութեան խնդրի մասին:

Կարելի է որպէս մի ընդհանուր դիտո- ղութիւն ասել, որ մինչեւ 60ական թուական- ների մեծ բարենորոգողական ժամանակա- շրջանը, պետական դպրոցներում իշխել են շատ խիստ կարգապահական կարգեր եւ որ ձեմարանը բացառութիւն չի կազմել այդ տեսակէտից: Յայտնի է, օրինակ, որ ձեմը

համարուել է թոյլատրելի միջոց պահպանե- լու դպրոցում կարգապահութիւն, եթէ չխօ- սենք ժամանակաւոր առանձացման կամ այլ պատժական միջոցների մասին:

Տեղեկութիւնները ասում են, որ ձեմա- րանում էլ հետեւել են նոյն կարգապահա- կան խիստ միջոցներին, թէեւ ձեմարանի հիմնադիրների մշտական ցանկութիւնն է եղել, որ ձեմարանը իր օրը ու չքաւոր երե- խաների համար, հեռաւոր երկիրներից եկած ու զրկուած ծնողական խնամքից ու գուր- գուրանքից, լինի մի ընտանեկան օջախ:

Յայտնի է, օրինակ, Սաչատուր Լազա- րեանի մարդասիրական հայեացքները ման- կավարժական գործի նկատմամբ:

Իր մի նամակի մէջ, գրուած Եփրեմ կա- թողիկոսին դեռ 1811 թ., հետեւեալ կար- ծիքն էր նա յայտնել Հայոց դպրոցներում կիրառելիք ուսման մեթոդի մասին.

— Դպրոցում ուսուցումը պիտի լինի՝ «Համեստ, թարց (առանց) իւր ցասման, բարկութեան եւ գանից պատժոյ հմտեցու- ցանել, զի բարկութիւն, սպառնալիք անա- ցուցանելն եւ խիստ պատժելն բարբարոսա- կան է գործ, միշտ խոտովեցուցիչ եւ յուսահա- տեցուցիչ աշակերտի, նմանապէս եւ տաղտ- կութիւն ուսուցչին¹»:

Չնայած Լազարեանների մարդասիրական այս սղուն, ձեմարանում կիրառուել են կար- գապահական խիստ միջոցներ:

Եր. Շահազիզը, Մ. Էմինի կենսագրու- թեան մէջ պատմում է, որ նրա տեսչութեան օրօք (1850—1860) գանակոծութիւնը կիրա- ուուելիս է եղել, որպէս մի միջոց պահպա- նելու ձեմարանում կարգապահութիւնը:

— «Պարզ ու ճիշտ է եւ այն, — գրում է Եր. Շահազիզը, — որ Մ. Էմինը իրրեւ գաստիարակ եղել է շափից գուրս ճշտապահ եւ խստապահանջ, որի պատճառով եւ իւր տեսչական գործունէութեան մէջ նա բազմա- թիւ եւ խոշոր անբաւականութիւնների եւ անախորժութիւնների պատահել...: Նրա տեսչութեան օրով, օրինակի համար, գանա- կոծութիւնը, որ այն ժամանակները ուսում- նարանական օրէնքով թոյլատրուած մանկա- վարժական խրատական միջոցներից մէկն է եղել, չափազանց իշխող դեր է կատարել Լազարեան ձեմարանում: Պատմում են, որ նա համարեա միշտ ներկայ գտնուելով աշա-

կերտներին գանակոծելու գործողութեան, սովորութիւն է ունեցել յաճախակի խրա- խուսել զարկոյններին, «Бейте, армянская кожа толста!» (= Չարկէ՛ք, հայի կաշին հաստ է) խօսքերով»:

Եթէ ի նկատի առնելու լինինք նաեւ Սմբատ Շահազիզի հետեւեալ կարծիքը Մ. Էմինի մասին, թերեւս, Եր. Շահազիզի վե- րոյշեալ պատմութիւնը Էմինի խստապա- հանջութեան մասին չհամարուի չափա- գանցութիւն, ինչպէս առաջին հայեացքից թւում է:

«Էմինը — ասում է Սմբ. Շահազիզը, — մի պաղարիւն եւ ստոնասիրտ մարդ էր. նա կարծես թէ ծանօթ չէր զգացմունքների աշխարհի հետ. նա, կարելի է ասել, աւելի զգում էր խելքով, քան թէ սրտով: Այս պատճառով նա միշտ ծանրարարոյ եւ ան- յողողող երեւելով, իւր աշակերտներին ան ու երկիւղ էր ազդում, քան թէ սէր ու հա- մակրութիւն, մի յատկութիւն, որ մանկա- վարժութեան ասպարէզում չի կարող լինել այնքան բեղմնաւոր ու նպատակայարմար: Էմինի մասին առհասարակ ասում են, որ նա իւր տեսչութեան ժամանակ եղել է բիւրո- կրատ եւ Փորձալիստ, բայց այդ ուղիղ չէ. մի այդպիսի կարծիք առաջացել է նրա բնա-ւորութեան յիշեալ գանդուածից, որ ամէն տեղ եւ ամենից գիտէ խստիւ պահանջել կար- գապահութիւն եւ մի չնչին գանցառութիւնը, որ այնքան սեփական է մանուկ սերնդի յարափոփոխ հոգեկան երեւոյթներին, եւ- թարկում է երբեմն անարժան պատիժներ: Այսպիսի դէպքեր շատ են պատահել Էմինի վարչութեան շրջաններում: Էմինը սպրել է մի ժամանակ, երբ որ եւ է բարի խառնուած- քով մարդը պիտի լինէր խստապահանջ եւ անազորոյն, ինչպէս եւ ներշնչում էր Նիկո- լայեան ռեժիմը²»:

60ական թուականներին, երբ կործա- նում էր ու վարկարեկուած Նիկոլայ Ա. բռնապետական ռեժիմը, երբ Ռուսաստա- նում ծնունդ առան ազատատենչ եւ հումա- նիտար գաղափարները, երբ հասարակական կեանքը վերից վար բարեփոխման ճամբու վրայ էր, երբ հասարակական կեանքի մթնոլորտը խտացած էր մի կողմից գերմա- նական փիլիսոփայութեան առաջաւոր գա- ղափարներով, միւս կողմից 1848 թ. Փետ-

¹ Տե՛ս Լէօ, «Պատմ. Եր. թեմ. դպրոցի», էջ 92:

² Տե՛ս Եր. Շահազիզի, «Սմբ. Շահազիզի կեն- սագրութիւնը», էջ 16—17:

